



Չորս տարի անընդմեջ Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության նախա
ձեռնությամբ,
Երեւանում,
Նկարիչների
միության շենքում, անցկացվում
է
ավանդական
դարձած
«
ԱՐՏ
-
ԷՔՍՊՈ
»
արվեստների
ցուցահանդեսը
:
Մարտի
3-4-

: Ցուցահանդեսի բացման արարողությանը ներկա էր ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, այլ պաշտոնական անձինք:



«ԱՐՏ-ԷՔՍՊՈՆ 2012» ցուցահանդես այցելեց եւ իր օրհնությունը բերեց Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Վիրահայոց Թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը:

Այս տարի «ԱՐՏ-ԷՔՍՊՈՆ»-ին մասնակցելու պատիվ ունեցավ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Վիրահայոց Թեմին կից գործող Թբիլիսիի «Հայարտուն» կրթա-մշակութային

Կենտրոնը: Ասենք, որ «Հայարտունը» միակ կազմակերպությունն էր արտերկրից, որ հրավիրված էր հայ արվեստների ցուցահանդեսին: «Հայարտունը» ներկայացնում էին կենտրոնի մշակույթի բաժնի պատասխանատու Լեւոն Չիդիյանը եւ տեխնիկական պատասխանատու Վալերի Բադալյանը: Գործունեության ընդամենը 7-8 ամսվա ընթացքում կատարած աշխատանքները ցուցանմուշների տեսքով հպարտորեն տեղ էին գրավել հատկացված տաղավարի բոլոր ցուցադարակներին: «Հայարտան» անունով հրատարակված գեղարվեստական եւ հրապարակային գրականություն, բրոշյուրներ, բուկլետներ, աֆիշներ ու հայտարարություններ եւ բազմաթիվ լուսանկարներ, որոնք արտացոլում էին «Հայարտուն» մշակույթի կենտրոնում կազմակերպված հանդիպումների, կայացած միջոցառումների, անհատական եւ հավաքական ցուցահանդեսների մանրամասները:

Ուրախալի է, որ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը առանձնահատուկ հետաքրքրություն ցուցաբերեց «Հայարտան» տաղավարի նկատմամբ եւ խոստացավ ուշադրություն եւ աջակցություն Մայր Հայրենիքի կողմից:

Այցելուների կողմից մեծ էր հետաքրքրությունը «Հայարտանը» տարվող կրթա-մշակութային աշխատանքների՝ նախակրթարանի, հայերենի եւ հայոց պատմության ուսուցման, վիրտուալ համալսարանի լսարանների եռուգեռը պատկերող լուսանկարների նկատմամբ:

ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը եւ այլ պաշտոնատար անձինք բարձր գնահատելով «Հայարտան» ծավալած բազմակողմանի եւ բեղմնավոր գործունեությունը, պատրաստակամություն հայտեցին ամեն կերպ աջակցելու Թբիլիսիի «Հայարտանը»: